

աշտարակներ կ'ուզեն կանգնել, որուն  
գագաթը ճշմարտասիրութեան հոդիէն  
աւելի՝ մարդկային ոգւոյն և փառասի-  
րութեան անձնաւորութիւնն կը բազմի:

Աւստի մեր պատուական վերծանո-  
ղաց կը թողունք անոնց պարտուապատ-  
շան յարգանքն ու հաւասար ընծայելը,  
զիտնալով որ մինչև հիմայ եղած ար-  
ձանագրութեանց ըստ կամ ընթերց-  
մամբ՝ անիրաւեցան և կը զեղծանին  
քան զշափին, ինչպէս կըսէ իրաւամբ  
կուդչմիթ, ընդէմ պատկառելի պատ-  
մութեան: Մյոյն կենտաւրոսներուն վր-  
րայ յեցած՝ արշաւասուր կ'ընթանան  
պատմութեան լայնածաւալ դաշտերը  
միայն, առանց նկատելու անոր խոր-  
հըրդաւոր սարերն ու ձորերը. և կ'ու-  
զեն լեզուաբանական գեռ բազմա-  
դէմ և յոդնակերպ հրէնչերով պատ-  
մարանութեան և անյիշատակ ժամա-  
նակաց սահմաները չափել, մինչդեռ ի-  
րենք ստուգիւդեռ չեն ճանչցած անոնց  
զօրութիւնը. վասն զի հինգ տեսակ սե-

պաձեւ արձանագրութեանց մէկը միայն  
յաջողեցան կարդալ մինչև ցարդ, այս-  
ինքն է պարսկայինը, որ 'ի խորսա-  
պատ, և թերես կարենան ըսել թէ ա-  
նոր խորհրդական բանալին և յաջող ըն-  
թերցումը գտան: Ուկը թողրւնք հապա-  
հին ազգաց գրականութեան նկատ-  
մամբ՝ անոնց մէջ եղած զանազան կար-  
ծիքը:

Աւստի ճշմարդիտն ուզելով խօսիլ,  
յայսմ մասին մենք ուրիշ բան չենք  
կրնար եղրակացընել, բայց եթէ ըսել  
ըստ առածին ընդդիմախօսաց. և մենե-  
քեան խնդրեն զիւրեանցն կացուցա-  
նել: Անձամբ առիթ ունենալով Հիւ-  
պշշման գերմանացի տաղանդաւոր լե-  
զուագիտին հետ խօսելու այս մասին  
վրայ, նա անկեղծօրէն վկայեց թէ  
լեզուաբանական զիտութիւնն երկրա-  
չափութեան պէս ստոյդ. և բացայայտ  
չըլլալով ենթագրութեամբք կը գնահա-  
տուին իրք շատ անդամ:

Կը շարունակուի.

Հ. Բարսեղ. Սպագուսաւ

## ԱՌ Ա Յ Ֆ Ի

Յաշխարհիս հինգ՝ 'ի մարդկանէ անգիտելի է.

Առաջին որ մարդ զմարդու խորհուրդն չգիտէ, և ոչ հրեշտակք և ոչ դեք:

Երկրորդ՝ որ 'ի յաւուրս 'ի վաղն չգիտենք թէ ինչ պիտի լինի:

Երրորդ՝ որ զինչ որ սկսունք չգիտենք թէ ինչ իրք պիտի աւարտի, 'ի բարի՞ թէ 'ի չար:

Չորրորդ՝ որ մակու օրն անգիտելի է:

Հինգերորդ՝ որ զկատարածի օրն չգիտենք:

Երեք իրք՝ որ զմարդն 'ի չարէն 'ի զատ կու պահէ:

Խղճմտակք, Երեսին ջուրն և բնական խելքն:

ՈՍԿԵՓՈՐԻԿ

— 5 : 8 : 6 —